

ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում վերապատրաստում Լիսաբոնի տեխնիկական համալսարանում (2018թ. հունիսի 18-22)

2018թ. -ի հունիսի 18-22-ը ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում 27 մասնակիցներ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի Ամերիկյան, Շիրակի պետական, Վանաձորի պետական համալսարաններից, Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայից, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից և Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից, ինչպես նաև 9 եվրոպական գործընկերներ բուհերի ներկայացուցիչներ մասնակցեցին Լիսաբոնի տեխնիկական համալսարանում կայացած վերապատրաստմանը:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանից մասնակցել են ՇՊՀ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Անահիտ Ֆարմանյանը, նույն կենտրոնի գլխավոր մասնագետ Ասյա Հարությունյանը, ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի գլխավոր մասնագետ Էլվիրա Զարգարյանը, դասախոս Հովիկ Մելքոնյանը:

Վերապատրաստման նպատակն էր վերանայել մարքեթինգի ռազմավարությունը և գործիքակազմը, ինչպես նաև ներմուծել մշակութային մարտահրավերները բարձրագույն կրթության միջազգայնացման կոնտեքստում: Հայկական համալսարանների մասնակիցները եվրոպական գործընկերներին ներկայացրեցին իրենց բուհերի մարքեթինգային նյութերը: Վերջիններս փոխանցեցին ՀՀ բուհերի ներկայացուցիչներին ոչ միայն սեփական փորձն ու մոդելները, այլ նաև տրամադրեցին դիտողություններ ու խորհրդատվություն՝ բարելավելու մարքեթինգային նյութերը:

Վերապատրաստումներին հաջորդեց նաև ծրագրի համակարգման հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները, ինչպես նաև ծրագրի հետագա գործողությունների շրջանակը:

[Training agenda](#)

[Training minutes](#)







